ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

0009 ք.Երևան, Կորյուն 17

«28» ապրիլի 2022թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Դատավորի լիազորությունները դադարելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 166-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Դատավորները պաշտոնավարում են մինչև վաթսունհինգ, իսկ Սահմանադրական դատարանի դատավորները՝ մինչև յոթանասուն տարին լրանալը»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորի լիազորությունները դադարում են, եթե լրացել է նրա 65 տարին:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով դատավորի պաշտոնավարումը դադարում է նրա 65 տարին լրանալու օրվանից»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով դատավորի լիազորությունների դադարման դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նախագահը դատավորի պաշտոնավարման ժամկետի ավարտից ոչ շուտ, քան մեկ ամիս առաջ և ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ հայտարարություն է տարածում դատական իշխանության պաշտոնական կայքում»:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացվում է, որ Վճռաբեկ դատարանի դատավոր Նախշուն Տավարացյանի 65 տարին՝ լիազորությունների ժամկետը, լրանում է 2022 թվականի մայիսի 23-ին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Գ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ**